

Հարգելի գործընկերներ,

Ուրախ եմ ձեզ ողջունել այս հիշարժան օրվա կապակցությամբ:

Օգտվելով առիթից՝ նախ թույլ տվեք Գիտության կոմիտեի և անձամբ իմ անունից շնորհավորել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հիմնադրման 75-ամյակի կապակցությամբ:

Հայաստանի Հանրապետությունում հասարակական գիտությունները և, հատկապես՝ հայագիտությունը, մշտապես գտնվում են մեր պետության և ղեկավարության հոգածության ու ուշադրության ներքո, իսկ 2008 թվականից առանձնակի ուշադրություն է դարձվում հայագիտությանը՝ որպես գիտության զարգացման գերակա ուղղություն: Պետությունը խիստ կարևորում է հայագիտության ոլորտում իրականացվող աշխատանքները և ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումները:

Այս առումով մեծ է Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դերն ու նշանակությունը: Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունը և առաքելությունը, համոզված ենք, հայ ժողովրդի ազգային նկարագիրը պահպանելը, սերունդներին կրթելը, հայեցի դաստիարակելը և հայրենիքին նվիրված քաղաքացիներ պատրաստելն է:

Ընդհանուր առմամբ, գիտության հայագիտական ճյուղերը պետք է նպատակաուղղվեն Հայաստանի Հանրապետության անկախ պետականության կայացմանն ու հզորացմանը, նպաստեն հայոց ազգային գաղափարախոսության ձևավորմանը, դառնան ազգային ու մշակութային անվտանգության ապահովման հզոր գործոն: Այս հարցում իր կարևորագույն համակարգող դերակատարումը պետք է ունենա ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան՝ իր կառույցներով, մասնավորապես՝ ոլորտում իր նշանակալի տեղն ունեցող Ձեր ինստիտուտի միջոցով:

Այսպիսով, հաշվի առնելով գիտության ոլորտում արդիական խնդիրների հետազոտություններում ունեցած ձեռքբերումները, գիտական կադրերի պատրաստման և գիտության ոլորտի զարգացման գործում ունեցած մեծ ավանդն ու նշանակալի գործունեությունը, ինչպես նաև՝ բարձր գնահատելով գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում ունեցած նշանակալի ծառայությունները, մասնավորապես՝ Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության քառահատորի կազմումը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 53-Ա/Ք հրամանով ինստիտուտի Հովհաննես Թումանյանի

կյանքի և գործունեության տարեգրության խմբի ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Աղասու Կիրակոսյանին շնորհվում է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի Ոսկե մեդալ:

Հաշվի առնելով գիտության ոլորտում ունեցած նշանակալի ձեռքբերումները, երկարամյա անձնվեր և արդյունավետ աշխատանքը՝ ինստիտուտի արտասահմանյան գրականության և համեմատական գրականագիտության բաժնի ավագ գիտաշխատողներ բանասիրական գիտությունների թեկնածու Գոհար Լևոնի Կարապյոզյանին և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Զարուհի Գևորգի Հայրյանին նույն հրամանով շնորհվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի պատվոգրեր:

Գիտության կոմիտեի անունից շնորհավորում եմ պարզևատրվողներին և մաղթում նորանոր հաջողություններ:

Հարգելի գործընկերներ,

Ավարտելով խոսքս՝ կցանկանայի մեկ անգամ ևս շնորհավորել հոբելյանի առիթով և ինստիտուտի ղեկավարությանը և ողջ անձնակազմին մաղթել գիտական անսպառ եռանդ, գործին սեր ու նվիրում:

Հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ ձեզ ձեր նվիրական գործում:

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի
նախագահի տեղակալ

Վարդան Սահակյան